

«Պետք է պայքարենք յուրաքանչյուր հայի համար»



Ի՞նչ է արվել ու ի՞նչ պետք է արվի. հոկտեմբերի 15-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում հրավիրված «Համաշխարհային հայկական կոնգրես» հասարակական կազմակերպությունների միջազգային միության երկրորդ հերթական համագումարում տրվեցին այս հարցերի պատասխանները:

Երևի խորհրդանշական է այն, որ Համաշխարհային հայկական կոնգրես-

սը դառնում է հայաստանակենտրոն կառույց, որովհետև Սփյուռքի մեր բոլոր կազմակերպությունների ամենակարևոր երեք խնդիրներից մեկը՝ Հայաստան-Սփյուռք համագործակցությունը, ուրիշ որտե՞ղ կարելի է արդյունավետ ծավալել:

Ուրեմն Կոնգրեսի կենտրոնականը այսուհետև կլինի Երևանում, իսկ Մոսկվայի գրասենյակը կլինի Կոնգրեսի մասնաճյուղի գրասենյակ: Այդ մասին հայտնեց Կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը:

Կոնգրեսի համագումարին տարբեր երկրներից մասնակցում էին 147 պատվիրակ: Նախագահությունում էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, Ռուսաստանի թեմի առաջնորդը:

Համագումարում ընդարձակ ելույթով հանդես եկավ Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Նա ողջունեց համագումարի մասնակիցներին և մաղթեց արգասաբեր աշխատանք:

Ապա ծայր տրվեց Խորհրդային Միության և Ռուսաստանի Դաշնության հերոս Արթուր Չիլինգարովին, որը հրապարակեց համագումարին ուղղված Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի ողջույնի ուղերձը:

Համաժողովի կազմակերպիչներին և մասնակիցներին իր օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն իր ելույթում հատկապես շեշտեց Կոնգրեսի և ՌՀՄ ուշադրությունը Գիտությունների ազգային ակադեմիայի հանդեպ:

Համագումարի առաջին մասի ավարտին Արա Աբրահամյանը բաց քվեարկությամբ միաձայն ընտրվեց Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ:

Երևանում կայացավ «Մոլեկուլային և բջջային կենսաբանության զարգացման հեռանկարներ-3» միջազգային գիտաժողովը

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Մոլեկուլային և բջջային կենսաբանության զարգացման հեռանկարներ-3» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպել էր Մոլեկուլային և բջջային կենսաբանության և իմունաբանության հայկական ասոցիացիան: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության երիտասարդ գիտնականները:

Ներկայացված զեկույցների, արդյունքների հիման վրա տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, և շնորհվեց երեք մրցանակ 1. Գիտությունների թեկնածուի լավագույն զեկույց, 2. մագիստրոսի և կամ ասպիրանտի լավագույն զեկույց, 3. ստենդային լավագույն աշխատանք անվանակարգերում:

Երիտասարդ գիտնականների մասնագիտական հե-

տաքերությունները խթանելու և մոլեկուլային կենսաբանության արդի հաջողություններին նրանց ծանոթացնելու նպատակով արտերկրյա հանրահայտ գիտական կենտրոններից, ինչպիսիք են՝ Տորոնտոյի համալսարանը, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտը, Հարավային դաշնային համալսարանը և Չիկագոյի համալսարանը, հրավիրվել էին առաջատար գիտնականներ, որոնք հանդես եկան պլենար զեկույցներով:

Գիտաժողովի կազմակերպմանն աջակցել էին Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը, Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (NFSAT), Գիտության զարգացման հիմնադրամը, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը և ՀՀ ԳԱԱ-ն:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնը

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը»

Ս.թ. հոկտեմբերի 8-10-ը ծաղկաձորում տեղի ունեցավ «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» չորրորդ միջազգային գիտաժողովը: Առաջին երեքը հրավիրվել էին 2003, 2006, 2009 թվականներին, ընդ որում բոլոր գիտաժողովների նյութերը հրատարակվել են առանձին գրքերով:

Հաշվի առնելով մեր տարածաշրջանի մշակութային կապերի բացահայտման խնդրի կարևորությունը՝ այս անգամ գիտաժողովը նվիրվել էր հայկական և կովկասյան ժողովուրդների էպոսներին և նրանց միջև եղած կապերին: Գիտաժողովին իրենց մասնակցությունն էին բերել գիտնականներ հինգ երկրներից՝ Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, Հունգարիա և ԱՄՆ:

Մասնակիցների թվում էին գիտնականներ Կովկասի մի շարք ինքնավար հանրապետություններից՝ Աբխազիա, Ադիգեա, Դաղստան, Չեչենիա, Օսեթիա: Կար մեկ մասնագետ Ուդմուրդիայից, որի զեկույցում նվիրված էր ուրալյան և կովկասյան էպիկական տեքստերի հնարավոր կապերին:

Բոլոր մասնակիցները գիտությունների դոկտորներ էին, շատերը՝ ակադեմիկոսներ, կային գիտական հիմնարկների տնօրեններ և բաժնի վարիչներ: Այսպես, մասնակցում էին Սուփյան Մահոմեդովը՝ Չեչենիայի պատմության, մշակույթի և լեզվի ինստիտուտի տնօրենը, Մահոմեդ Մահոմեդովը՝ Դաղստանի հումանիտար ինստիտուտի տնօրենը, Ֆատկապետ ուշագրավ Յիրա Բարամիձեն՝ Թբիլիսիի համալսարանի կովկասագիտության ինստիտուտի տնօրենը: Հատկապես ուշագրավ էին հայկական էպոսի՝ վրացական և հյուսիսկովկասյան էպոսների առնչությունները քննարկող զեկույցումները՝ Ե. Բեսուլովա, Ս. Հարությունյան, Մ. Մահոմեդով, Ա. Աջին, Ա. Պետրոսյան, Լ. Ղազարյան և այլք: Գիտաժողովն անցավ գիտական բարձր մակարդակով և արժանացավ բոլոր մասնակիցների բարձր գնահատականին:

Այն, կարելի է ասել, որոշ առումներով նոր խոսք էր մեր տարածաշրջանային ուսումնասիրությունների համատեքստում: Ավելին, կարելի է վստահաբար ասել, որ տարածաշրջանի էպոսների ուսումնասիրությունը, ինչպես նաև հայ և կովկասյան էպոսների համեմատական ուսումնասիրությունը, այս գիտաժողովից հետո նոր թափ կստանա:

Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

«Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները»

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները» թեմայով գիտաժողովը, որը նվիրված էր ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին: Գիտաժողովի նպատակն էր ընդհանրացնել քիմիական ֆիզիկայի բնագավառում ստացված արդյունքները, միջազգային գիտական հանրությանը ծանոթացնել ինստիտուտի վերջին տարիների գիտական մշակումներին, քննարկել բնագավառի զարգացման հեռանկարներն ու փոխանակել ձեռք բերված փորձը:

Ինստիտուտում մշակված և կիրառական հետաքրքրություն ունեցող մի շարք առաջարկներ ներկայացվել են ՀՀ կառավարական տարբեր մարմինների և միջազգային մի շարք կազմակերպությունների: Նշենք, որ ինստիտուտի աշխատակիցների կողմից առաջարկված ինովացիոն «ԼԱ-2» ժամգի ձևափոխիչի ստացման տեխնոլոգիայի մշակում» ծրագրին 2011-2012 թթ. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից տրամադրվել է 25,5 մլն դրամ ֆինանսավորում՝ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների ծրագրի շրջանակներում, և ներկայումս ինստիտուտի տարածքում ավարտին են մոտենում փորձնական արտադրական տեղամասի կառուցման աշխատանքները:

Վերջին երեք տարիների ընթացքում հրատարակվել են 1 մենագրություն և ավելի քան 70 գիտական հոդվածներ, որոնցից 45-ը՝ արտասահմանյան գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, պաշտպանվել են 3 թեկնածուական ատենախոսություններ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա գործունեությանն է նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ադուլֆ Մանթաշյանի «Դա եղել է այսպես...» ուշագրավ հրապարակումը, որը կարող եք ընթերցել մեր թերթի հաջորդ համարում:


Այս է բացել Լոռվա Աղբյուրփի գյուղում, որը, լինելով արմատական հայկական հող՝ գտարյուն հայ բնակչությամբ, անցյալի կեղծարար դատավորների կողմից հայտնվեց Վրաստանի վարչական տարածքում:

Աղբյուրփին գտնվում է Լալվար «գրական» լեռան (տե՛ս «Լալվարի որսը» պոեմը) հովանու ներքո՝ կուսական անտառների գրկում:

Ես բարեբախտություն եմ ունեցել մի քանի ամիս ընտանյոք ապրելու Աղբյուրփիում, որտեղ էլ առաջին անգամ ծանոթացա բառասանայա Վաղիմիր Բարխուդարյանի հետ, որ Հայաստանում արդեն ճանաչված գիտնական էր, պատմական գիտությունների դոկտոր: Հայրը՝ Բախչին, կոլտնտեսության նախագահն էր,

մության ինստիտուտի փոխտնօրեն, հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, հումանիտար գիտությունների գծով ակադեմիկոս-քարտուղար, այժմ Ակադեմիայի նախագահության խորհրդականն է, սակայն երբեք չընդունեց պաշտոնյայի կեցվածք՝ յուրաքանչյուր օրը ապրելով իբրև պարզ-անմիջական մարդ և գտարյուն գիտնական:

Բարխուդարյանի աշխատությունները աղբյուրագիտական հարուստ հիմքով ուսումնասիրել, վերլուծել ու գնահատել են բազմաթիվ իրողություններ և ընդարձակ ժամանակաշրջան՝ Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների պատմություն, հայկական



մեր ազգային նկարագրի պահպանման: Բնավ չսովորելով բնական գիտությունների դերն ու նշանակությունը, որոնց որոշ ճյուղերով հասանք միջազգային ճանաչման՝ աստղագիտություն, մաթեմատիկա և այլն, մենք, կարծում եմ, եղել ու մնում ենք հումանիտար ժողովուրդ, ինչը կանխորոշեցին Մաշտոցը, Խորենացին, միջնադարյան մանրանկարիչներն ու բանաստեղծները, բան-ի ազգ ենք՝ խոսքի, երգ ու տաղի, հոգու: Բարխուդարյանը ցանկալի ու պատվավոր հյուր է ամենուրեք՝ գիտական օջախներում, բուհերում, ստեղծագործական միություններում, գրադարաններում, Սուրբ Էջմիածնում, բազում հասարակական միջոցառումներում, պասսիվ ներկայություն չէ, ելույթներ է ունենում, բանավեճերի մասնակցում՝ մշտապես սևեռվելով ժողովրդի կյանքի, գիտամշակութային խնդիրների վրա: Գրողների բարեկամն է ու համախոհը: Այսօր նահապետ է իր ապրած կյանքով ու տաղանդավոր վաստակով, հայրենանվեր գիտնական: Եվ ինչպես ամեն մի լուսավոր նահապետ, լի է իր գրեթե դարակազմիկ ժամանակի հպարտությամբ, որում և՛ ուրախություն կա, և՛ ցավ ու տառապանք:

Հայոց գրավոր գրականությունը սկիզբ առավ պատմագրությունից. Կորյունը, Ագաթանգեղոսը, Եղիշեն, Խորենացին նաև գրողներ էին՝ կյանքն ու պատմությունը գրով ու բանիվ արտացոլողներ: Այս սկիզբը շարունակվեց ու զարգացավ՝ հասնելով մեր օրերը, և դեռ պիտի առաջ գնա: Հայ պատմագրությունն ու գեղարվեստական գրականությունը եղբայր և քույր չեն, այլ եղբայր ու եղբայր, որ մեր արքայական խոսքի ազգային յուրահատկությունն է, ինչով ինքնուրույնացում ենք և տարբերվում օտար շատ մշակույթներից: Ես Վաղիմիր Բարխուդարյանին դիտում եմ այս դաշտում՝ իբրև նրա գլխավոր դերակատարներից մեկը:

Մենք հաճախ նեղացնում ենք «մշակույթ» հասկացության շրջանակը՝ այստեղ տեղադրելով գլխավորապես արվեստի տեսակները՝ գրականություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն և այլն, գիտությունները լուսանցք հանելով, մինչև իսկ արվեստների վերաբերյալ վերլուծական տեսաբանությունը, այդ թվում և պատմագրությունը, ինչն աղբատացնում է մեր մշակույթը ներկաներիս հոգու, աչքի և մտքի կարճատեսությամբ: Պատմագրությունը լիարժեք մշակույթ է, մեծ երևույթ, հայոց գոյապահպանության հզոր սյուներից մեկը:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը, գիտական հանդեսների, «Գիտություն» թերթի խմբագրությունները սրտանց շնորհավորում են մեծանուն պատմաբան, ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի փոխնախագահ, ակադեմիկոս Վաղիմիր Բարխուդարյանին 85-ամյա հոբելյանի առթիվ, մաղթում նրան քաջառողջություն և ստեղծագործական երկարակեցություն:

Նորայր ԱՂԱՅԱՆ

Հայոց պատմությունը՝ ապգային մշակույթ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱԳԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԾԱՆՊԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

բարձրահասակ, թիկնեղ-գեղեցիկ, արդեն ալեհեր, ժպտուն, բարեհաճ տղամարդ: Վաղիմիրը, որին երբեմն հանդիպում եմ Ակադեմիայում, ինձ հիշեցնում է իր հորը: Այդ ընտանիքի հարսը տիկին Նեկտարն է՝ առ այսօր իր ամուսնուն սիրող և նրա կողմից սիրված, գեղեցիկ, նրբանկատ, գիտուն մի անձնավորություն, ես ուրախ եմ, որ նրան էլ տեսա ու ճանաչեցի: Նրանք անմոռանալի, ցնցող վայրկյաններ ապրեցին 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, երբ հեռուստացույցով դիտում էին Ազգային ժողովի սպանդը՝ ավելի դաժան, քան Հուլիոս Կեսարի սպանությունը Հռոմի սենատում: Այդ բացառիկ ողբերգական տեսարանը բուրդիս աչքի առջև է. նրանց միակ զավակը՝ այն ժամանակվա ՀՀ ֆինանսների նախարար Լևոն Բարխուդարյանը, ամբողջով ելույթ էր ունենում և միայն պատահականորեն չզնդակահարվեց: Աստված բարեհաճ եղավ Բարխուդարյան ընտանիքի հանդեպ: Երանի այդ բարեբախտությունը մյուսներին էլ վիճակվեր:


Հավատում եմ, որ մարդու անձնական և հասարակական կուլտուրան ձևավորվում է ոչ միայն լուրջ ու տևական ուսումնառությամբ, ինչը, անշուշտ, շատ կարևոր է, այլև, գուցե ավելի, իր բնության, հայրենի հող ու ջրի, ծնողաց բարոյականության շնորհիվ, իր ժողովրդի հոգեկերտվածքով, որը մեր դեպքում տարիք չի ճանաչում: Այս հավատամքն իմ մեջ ամրապնդում էր և Վաղիմիր Բարխուդարյանի կերպարը: Ավարտելով երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը՝ շուտով նա ամբողջովին նվիրվեց մեր կարևորագույն գիտահոգևոր օջախի ազատական գործընթացներին, եղավ պատ-

գաղթավայրեր, հայ խորհրդային պատմագրություն, հայ-ռուսական հարաբերություններ, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն և այլն: Ակտիվ մասնակցություն է ունեցել հայոց պատմության ակադեմիական բազմա-հատորյակի իրականացմանը: Դպրոցական դասագրքեր է հեղինակել ու խմբագրել: Բազմաթիվ գիտական հոդվածներ, զեկուցումներ և ելույթներ այս և այլ խնդիրների շուրջ: Բարխուդարյանի հետաքրքրությունները չեն ներփակվում նշված դաշտի շրջանակում, այլ դուրս են գալիս հայոց պատմության հազարամյա ասպարեզ՝ հասնելով գրերի գյուտին և հայ ինքնության արմատներին, ներառում վաղ միջնադարյան ազատագրական շարժումներն ու Ավարայրը: 2008-ին լույս տեսած «Պատմագիտության հարցեր» հոդվածների ստվարածավալ ժողովածուն ակադեմիկոսի երկարամյա գիտական վաստակի ամփոփումն է մի քանի բնորոշ և էական շեշտադրումներով: Այս թեմաներից մի քանիսը, եթե նույնիսկ արծարծվել են, Բարխուդարյանը նորովի է քննարկում՝ խնդիրները համատեղելով մեր ժամանակի պահանջներին, տալիս արդիական պատասխաններ: Օրինակ, անդրադառնալով խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության գնահատությանը, նրա հայացքը սկզբունքորեն սահմանազատվում է այդ պատմագիտությունը միակողմանի ու հախտուն ժխտելու «հեղափոխական» կարծիքներից: Այո՛, եղել է տոտալիտար գաղափարական ճնշում, հասարակագիտության բոլոր ճյուղերն էլ ապրել են այդ ճնշման ներքո, սակայն ակադեմիկոսը վիճում-հաստատում է անառարկելի ճշարտությունը՝ գաղափարական թելադրանքով

հանդերձ՝ հայ պատմագիտությունը հարթել է իր «սեփական-անկախ ուղին», չի ստրկացել, ինչի վկայությունն են հենց Ակադեմիայի հրատարակությունները՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Հնագիտական պեղումները Հայաստանում», «Հայ ազգագրություն և բանահյուսություն», «Դիվան հայ վիճագրության», «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» և տասնյակ ու տասնյակ այլ գրքեր, որոնք կազմում են մեր պատմագիտության ծանրակշիռ ու մնայուն գրադարանը: Վաղիմիր Բարխուդարյանի քաղաքացիական նկարագիրը ներկայիս հայ մշակույթի ասպարեզում օրինակելի է և անանձնական: Նա պատմության բացասական երևույթների կողքով հաշտ ու անտարբեր չի անցնում և տեր է հարազատ ժողովրդի գիտամշակութային նվաճումներին, ի տարբերություն նրանց, ովքեր կեղտաքրի հետ երեխային էլ են դուրս չարտում: (Ուզում եմ կոմունիստ Շահումյանի ընտիր արձանն էլ վար առնել, որը եվրոպական ուսումնառությամբ ու հայացքներով կերտել է մեծանուն քանդակագործ Սերգեյ Մերկուրովը: Հետո ոտնձգություններ կանեն խորհրդային ժամանակ ստեղծված Ակադեմիայի, Մատենադարանի, թամանյանական օպերայի ու այլ կառույցների հանդեպ, Չարենցին կմեղադրեն ինչ-որ ժամանակ կոմունիստ լինելու համար, վարպետ Սարյանին՝ սոցիալիստական աշխատանքի հեղուկ):

Նշանակալից է Վաղիմիր Բարխուդարյանի ներդրումը Ակադեմիայի հումանիտար գիտությունների աշխատանքը կազմակերպելու գործում՝ ի նպաստ

Հայ գրադարանության 500-ամյակը



Մեր թերթը տպագրելու է մի հատված ժամանակին Ռուսաստանում և Եվրոպայում մեծ համբավի արժանացած անվանի տնտեսագետ, սոցիալական կոոպերացիայի ճանաչված տեսաբան Վահան Տոտոմյանցի (1869-1952 թթ.) «Հայոց դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ» աշխատությունից:

Ուսումնասիրությունը լույս է տեսել 1936 թ. Սոֆիայում բուլղարերեն (ունեցել է ևս երկու վերահրատարակություն՝ 1942 և 1951 թթ.), հետո նաև՝ ֆրանսերեն (Le rôle des arméniens dans la civilisation mondiale)՝ 1938 թ., Բելգրադ, 1950 թ., Փարիզ):

Հեղինակի մտահղացմամբ ուսումնասիրությունը նախատեսված է եղել օտար, «բայց շահեկանությունից զուրկ չէ նաև հայ ընթերցողի» համար: Աշխատությունը հայերեն է թարգմանել Ե. Հակոբյանը, որի ներքոբերյալ հատվածը լույս է տեսել «Բազմավեպ» պարբերականի՝ 1951 թ. մայիս-հունիս համարներում: Թարգմանչի հավաստմամբ, հայերեն տեքստը «հրապարակվում է» նույնությամբ:

(Այն կկարդաք մեր թերթի հաջորդ համարում):



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ
ԳԱՍ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի ֆիզիկական օրգանական քիմիայի լաբորատորիայի ղեկավար, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վալերի Սամսոնի Պետրոսյանը ծնվել է 1942թ. մարտի 7-ին Բաքվում:

Ծնողները՝ Սամսոն Պետրոսյանը և Թամարա Զիլինգարովան ծնվել են Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանում: Ավարտելով Մարտակերտի դպրոցը՝ հայրը 1935թ. մեկնում է Լեռնի գյուղ, ստանում ինժեներ-շինարարի դիպլոմ, սակայն աշխատանք չգտնելով Ղարաբաղում, երևա-

1967թ. պաշտպանելով ատենախոսությունը՝ Վալերի Պետրոսյանը ծեռնամուխ եղավ իր գիտական թեման առավել զարգացնելու և այն դոկտորական ատենախոսություն դարձնելու գործին: 1971թ. Պետրոսյանը դարձավ ավագ գիտաշխատող, իսկ 1974թ. նա արդեն դոցենտ էր:

Վալերի Պետրոսյանը 1976թ. գիտական ղեկավար Օլեգ Ռիտտովի աջակցությամբ մեկնում է ԱՄՆ՝ Լոս Ան-

ջին խմբեր պատրաստելու և լաբորատորիաների տարածք ծեռք բերելու համար:

2007 թ. Վալերի Պետրոսյանն ընտրվեց Մոսկվայի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր, որը խիստ պատվաբեր է յուրաքանչյուր գիտնական-մանկավարժի համար:

1975 թ.-ից ի վեր Վալերի Պետրոսյանը, իր մասնագիտությունից բացի, մեծ աշխատանք է կատարել էկոլոգիայի ոլորտում, հատկապես ջրի էկոլոգիայի բնագավառում: 1992թ. նա արժանացել է եվրոպայի պարգևին՝ էկոլոգիայի ոլորտում հաջող գործունեություն ծավալելու համար:

Վալերի Պետրոսյանը բավական ակտիվ է եղել նաև հասարակական ոլորտում: Համագործակցելով ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի հետ՝ մշտապես օգնել է ինչպես Հայաստանին, այնպես էլ Ռուսաստանի հայ համայնքին: Նրանք հատկապես աջակցել են երիտասարդներին՝ բարձրագույն կրթություն ստանալու, ասպիրանտուրայում սովորելու, Հայաստանից եկած երիտասարդ գիտնականներին Ռուսաստանում վերապատրաստվելու հարցում:

Վալերի Պետրոսյանը բավական սերտ կապեր ունի հայրենական գիտական կենտրոնների հետ: Քիմիայի բնագավառում տարիներ շարունակ արդյունավետ համագործակցել է ՀՀ ԳԱՍ վաղամեռիկ ակադեմիկոս Արդա Ավետիսյանի՝ ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի, քիմիական ֆակուլտետի ղեկավարի հետ՝ համատեղ կազմակերպելով հայ-ամերիկյան, հայ-գերմանական սիմպոզիումներ: Այսօր Պետրոսյանը բավական ակտիվ համագործակցում է ՀՀ ԳԱՍ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի հետ, իսկ ՀՀ ԳԱՍ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ղեկավարի հետ ծեռք են բերել համագործակցության մի շարք պայմանավորվածություններ:

Հաշվի առնելով Վալերի Սամսոնի Պետրոսյանի գիտական, մանկավարժական վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Վալերի Պետրոսյանն ամուսնացած է, ունի մեկ տղա՝ Ալեքսանդր Պետրոսյանը, ով ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի օվկիանոսագիտության բաժինը, և մեկ աղջիկ՝ Ելենան, ով մասնագիտացում է հոգեբանության ոլորտում:

Վալերի Սամսոնի Պետրոսյանը շարունակում է մեծ ջանքեր ներդնել քիմիայի և էկոլոգիայի ոլորտի զարգացման գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ

ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

Վալերի Սամսոնի Պետրոսյանը

նում և Թբիլիսիում՝ մեկնում է Բաքու, որտեղ էլ ծնվում են նրա երկու զավակները: Սամսոն Պետրոսյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Վալերի Սամսոնի Պետրոսյանը սովորել է Բաքվի ռուսական 6-րդ դպրոցում, որը բավական մեծ համբավ ուներ հատկապես սպորտային ոլորտում, որտեղ էլ Վալերին զբաղվում էր բասկետբոլով և ծեռքի զնդակով: Վալերի Պետրոսյանը մեծագույն ակնածանքով է հիշում իր ուսուցիչներին՝ Ռոզալյա Սանդլերին (քիմիա), ՍՄՅՄ վաստակավոր ուսուցիչ Նիկոլայ Շիշկինին (ֆիզիկա), Սիմոն Պետրոսյանին (մաթեմատիկա): 9-րդ դասարանում պատանի Վալերին, ընթերցելով Օլեգ Ռիտտովի «Մոլեկուլների ճարտարապետը» գիրքը, հասկացավ, որ ամենից շատ ցանկանում է հանդիպել քիմիկոս պրոֆեսոր Ռիտտովի հետ: Այդ գիրքը իրոք ճակատագրական եղավ նրա մասնագիտության ընտրության հարցում:

Վալերի Պետրոսյանն ավարտեց դպրոցը արծաթե մեդալով և 1959թ. ընդունվեց Մոսկվայի պետական համալսարանի քիմիայի բաժին և հենց առաջին կուրսում ծանոթացավ Օլեգ Ռիտտովի հետ, որը ղեկավարում էր օրգանական քիմիայի տեսական պրոբլեմների լաբորատորիան: Սովորելուն զուգընթաց աշխատանքի անցավ այդ լաբորատորիայում:

1964թ. Վալերի Պետրոսյանը, ավարտելով համալսարանը, ընդունվեց ասպիրանտուրա. նրա գիտական ղեկավարն էր ակադեմիկոս Օլեգ Ռիտտովը: Վալերի Պետրոսյանը շուտով նաև աշխատանքի անցավ Ռիտտովի լաբորատորիայում, իսկ որոշ ժամանակ անց՝ արդեն դասավանդում էր Մոսկվայի պետական համալսարանում:

ջելես՝ Փասադենայի Կալիֆոռնիական տեխնոլոգիական համալսարանում՝ վերապատրաստվում և, մեկ տարի շարունակ ուսումնասիրություններ կատարելով՝ կարողանում է ավարտին հասցնել դոկտորական ատենախոսությունը, որը հաջողությամբ պաշտպանում է 1979 թվականին:

1981թ. Վալերի Պետրոսյանին շնորհվեց պրոֆեսորի կոչում, իսկ 1988թ. Օլեգ Ռիտտովը Վալերի Պետրոսյանին հանձնեց իր կողմից ստեղծված լաբորատորիան, և մինչև այսօր՝ արդեն 24 տարի, Վալերի Պետրոսյանը ղեկավարում է Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի ֆիզիկական օրգանական քիմիայի լաբորատորիան: Հատկանշական է, որ Վալերի Պետրոսյանը մեծագույն ակնածանքով է երախտագիտությամբ է խոսում իր գիտական ղեկավար Օլեգ Ռիտտովի մասին:

Այսօր Վալերի Պետրոսյանը Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է, ինչպես նաև այդ ակադեմիայի քիմիական բաժանմունքի ղեկավարը, որտեղ գործում են ավելի քան 42 հայտնի գիտնականներ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանել են 32 գիտության թեկնածուներ, 8 գիտության դոկտորներ, որոնց Վալերի Պետրոսյանն աջակցել է աշխատանքա-

Սեփականեցին ողջ տարածաշրջանի իրավունքը

Վրաստանի կողմից եվրամիությունում «Վրաստանը» գինու օրորոց» բրենդի գրանցումը առաջ է բերել հայ հնագետների տարակուսանքը:

Ինչպես մամուլ ասուլիսում հայկական կողմից նշեց Արենի-1 քարանձավի հնագիտական արշավախմբի ղեկավար, ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Բորիս Գասպարյանը, եվրամիությունն իրավունք չունի վրաստանը հայտարարելու «Գինու օրորոց»: Բորիս Գասպարյանը հավելեց նաև, որ որոշումն ընդունվել է՝ հիմնվելով Հարավային Կովկասի երկրների ներկայիս սահմանների վրա: Փորձագետը նշեց, որ այդպիսի կոչում կարող է կրել ոչ թե առանձին մի երկիր, այլ ամբողջ այն տարածաշրջանը, որն այսօր ներառում է այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Իրանը, Թուրքիան, Սիրիան: Գասպարյանը հիշեցրեց, որ հենց Իրանի տարածքում են գտնվել խաղողի հնագույն կորիզները:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Արենի քարանձավում հայտնաբերվել են գինեգործության հնագույն վկայություններ, որոնց տարիքը 6 հազար տարուց ավելի է:

Հնագետը նշեց, որ տարածաշրջանի այս կամ այն երկիրը կոչել գինեգործության հայրենիք կոռեկտ չէ, քանի որ մեծ հայտնագործությունները վերաբերում են այն ժամանակներին, երբ ներկայիս պետական սահմանները գոյություն չունեին:

Այս առիթով Հայաստանի գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանը հայտարարել է, որ եվրամիությունը պետք է վերանայի «Վրաստանը» գինու օրորոց» բրենդի վերաբերյալ որոշումը: Նրա կարծիքով Վրաստանը պարզապես օգտագործել է այն հանգամանքը, որ տվյալ բրենդը կարող է մեծացնել աշխարհի գինեգործության ընկերակցության հետաքրքրությունը Վրաստանի նկատմամբ:

«Իրավիճակը և զարգացման միպոլմները Մերձավոր Արևելքում» խորագիրը կրող սեմինար

Ս. թ. հոկտեմբերի 10-ին Աղվերանում անցկացվեց «Իրավիճակը և զարգացման միպոլմները Մերձավոր Արևելքում» խորագիրը կրող սեմինար: Միջոցառման կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱՍ արևելագիտության և Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտները:

Բացման խոսքով հանդես եկան արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ Ռ. Սաֆրաստյանը, Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի առաջին տեղակալ Կ. Կոկարևը: Նրանք կարևորեցին այս գիտական միջոցառումը՝ հույս հայտնելով, որ երկու գիտական կենտրոնների միջև համագործակցությունը հետագայում կշարունակվի և կզարգանա: Հիշեցնեց, որ ս.թ. հունիսին երկու ինստիտուտների միջև ստորագրվել է գիտական համագործակցության մասին համաձայնագիր: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն քաղ.գ.դ. Ռ. Զոթանջյանը:

Սեմինարի շրջանակում անցկացվեց երեք նիստ, որին մասնակցեցին 12 գիտաշխատողներ ՀՀ ԳԱՍ արևելագիտության և Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտներից: Մասնակիցներն անդրադարձան տարածաշրջանին հուզող արդիական մի շարք հիմնախնդիրների, Մերձավոր ու Միջին Արևելքում, ինչպես նաև Կովկասում տեղի ունեցող ներկա քաղաքական զարգացումներին:

Ադուֆ Հայրապետի Մանթաշյան

Լրացավ 33 ԳԱԱ ակադեմիկոս, մեծավաստակ գիտնական, փառաշատ քիմիկոս Ադուֆ Հայրապետի Մանթաշյանի ծննդյան 80-ամյակը:



Ադուֆ Մանթաշյանի գիտական գործունեությունը սկսվել է 1956 թ., երբ նա, գերազանցությամբ ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, որպես լավագույն շրջանավարտ, աշխատանքի է անցել այդ նույն ինստիտուտի քիմիական տեխնոլոգիաների պրոցեսներ և ապարատներ ամբիոնում: 1958 թ. գործուղվել է ՍՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ՝ ասպիրանտուրայում սովորելու, որն ավարտելով՝ պաշտպանել է թեկնածուական թեզը՝ ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանի ղեկավարությամբ:

Չնայած Մոսկվայում մնալու և գիտական աշխատանքը շարունակելու գրավիչ առաջարկներին, հավատարիմ մնալով ազգային գիտության զարգացման սկզբունքներին, Մանթաշյանը նախընտրում է վերադառնալ Հայաստան: Անգնահատելի է նրա դերը ակադեմիկոս Արամ Նալբանդյանի կողմից ՀՍՄՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի լաբորատորիայի հիմնադրման գործում, որը 1975 թ. վերակազմավորվել է ՀՍՄՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի: Այստեղ Ա. Մանթաշյանի կողմից կատարվել են սկզբունքային նշանակություն ունեցող հիմնարար գիտական հետազոտություններ, որոնք ընդհանրացվել են նրա՝ 1975 թ. Մոսկվայում փայլուն պաշտպանած դոկտորական դիսերտացիայում:

1973 թվականից մինչ օրս նա ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ածխաջրածինների օքսիդացման լաբորատորիայի անվտիսարինելի վարիչն է: 1975-1976 թթ. եղել է ՀՍՄՀ ԳԱ ԶԶԻ փոխտնօրեն՝ գիտության գծով: 1987-2006 թթ. զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ ԶԶԻ տնօրենի պաշտոնը: Մեծ է Ա. Մանթաշյանի դերը հանրապետության, ինչպես նաև գիտական հասարակության համար ծանր տարիներին ինստիտուտի դեմքը պահպանելու գործում: 2007-2011 թթ. նա ղեկավարել է ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանումը:

Լայն են ակադեմիկոս Ա. Մանթաշյանի գիտական հետաքրքրությունների և ակտիվ պրոֆեսիոնալ գործունեության շրջանակները՝ բարդ քիմիական ռեակցիաների կինետիկա, այրման պրոցեսների քիմիա, ֆոտոքիմիական և լազերային տաքացմամբ ընթացող քիմիական պրոցեսներ, սառը բոցեր և օսցիլյացիաներ: Ա. Մանթաշյանն ածխաջրածինների փոխարկման պրոցեսների ասպարեզում ճանաչված հեղինակություն է: Նրա ղեկավարությամբ կատարված աշխատանքները

բազմիցս զեկուցվել են միջազգային գիտաժողովներում Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Ավստրիայում, Ռումինիայում և այլն:

Քիմիկոս-գիտնական Ա. Մանթաշյանին բնորոշ է հիմնարար գիտության արդյունքների համադրումը կիրառական խնդիրների լուծմանը: Նրա կողմից ձեռք բերված առավել կարևոր գիտական նվաճումներից կարելի է նշել հետևյալները:

Ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանի հետ համատեղ մշակվել է շրթայական ռեակցիաների ընթացքի համար պատասխանատու ակտիվ միջանկյալ մասնիկների՝ ազատ ռադիկալների գրանցման նոր եղանակ, որը քիմիական հանրությանը հայտնի է որպես ռադիկալների սառեցման կինետիկական եղանակ՝ ԴՊՈ սպեկտրոսկոպի միջոցով ռադիկալների գրանցմամբ:

Օգտագործելով այդ արդյունավետ եղանակը՝ առաջին անգամ հայտնաբերվել են շրթային կրողներ ազատ ռադիկալների այնպիսի կարևոր քիմիական ռեակցիաներում, ինչպիսիք ածխաջրածինների օքսիդացման գազաֆազ շրթայական ռեակցիաներն են: Ստացված տվյալների հիման վրա առաջարկվել են տարբեր դասի ածխաջրածինների՝ պարաֆինային, օլեֆինային արոմատիկ, օքսիդացման բազային մեխանիզմները, և ի հայտ են բերվել ընդհանրությունները, ինչպես նաև դրանց մասնակցությամբ ընթացող ռեակցիաների առանձնահատկությունները: Այդ հետազոտությունները թույլ են տվել մշակել արդյունաբերական կարևոր նշանակություն ունեցող միացությունների (պոլիմերային նյութերի մոնոմերների)՝ էթիլենի, պրոպիլենի և դրանց օքսիդների ստացման յուրօրինակ եղանակներ:

Անհրաժեշտ է հատուկ նշել Ա. Մանթաշյանի կողմից ստեղծված և հաջողությամբ զարգացող նոր ուղղության մասին՝ կապված շրթայական ռեակցիաների ազդեցությամբ պինդ ֆազային նյութերի փոխարկումների հետ: Մշակված մոտեցումը թույլ է տալիս իրականացնել հետերաֆազ քիմիական պրոցեսներ առավել ցածր ջերմաստիճաններում: Ստեղծվում են նոր հնարավորություններ մետաղական հանքանյութերի վերամշակման, այդ թվում նաև օքսիդների և ծծումբ պարունակող միացությունների համար: Մշակվել և փոր-

ծարկվել է կվարցիտների և պեռլիտների մաքրման արդյունավետ եղանակ:

Ադուֆ Մանթաշյանը ջանք ու եռանդ չի խնայել երիտասարդ կադրերի պատրաստման գործում: 1963-1976 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանի տեսական քիմիայի ամբիոնում: Շուրջ 15 տարի ղեկավարել է ՀԴՊՀ ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնը (համառոտագրությամբ և երկար տարիներ դասախոսել է ուսանողներին և մագիստրանտներին):

Ա. Մանթաշյանը միշտ առանձնահատուկ ուշադրություն է բարի կամք է դրսևորել դեպի երիտասարդ աշխատակիցները և ասպիրանտները: Նրա կողմից առաջադրված խնդիրները միշտ եղել են արդիական և հեռանկարային, իսկ նրա մասնակցությունը գիտափորձերի իրականացմանը և տվյալների մշակմանը՝ պարզապես անգնահատելի է:

Իր գիտական գործունեության ընթացքում նա պատրաստել է ավելի քան 24 գիտության թեկնածուներ և 5 գիտության դոկտորներ:

Ակադեմիկոս Մանթաշյանի ձեռքբերումները և մասնավորապես գործունեությունն արժանացել են համընդհանուր ճանաչման և բարձր գնահատականի: Գիտության ասպարեզում նվաճումների համար նրան շնորհվել են բազմաթիվ պատվոգրեր և հուշամեդալներ: Նա արժանացել է ՀՀ գիտության պատվավոր գործչի կոչման: 1976 թ. ակադեմիկոս Ա. Նալբանդյանի համահեղինակությամբ գրված «Элементарные процессы в медленных газофазных реакциях» մենագրության համար արժանացել է գիտության ասպարեզում Հայաստանի պետական մրցանակի դափնեկրի կոչման:

Ակադեմիկոս Մանթաշյանը ՀՀ ԳԱԱ իսկական անդամ է, մի շարք միջազգային ակադեմիաների անդամ, Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիական ընկերության ֆիզիկական և կոլոիդ քիմիայի գիտական խորհրդի անդամ, Հայկական քիմիական ընկերության նախագահ, ՀՀ ԳԱԱ ԶԶԻ-ում գործող «Ֆիզիկական և անօրգանական քիմիա» 017 մասնագիտական խորհրդի նախագահ, «Հայկական բանակ», եվրասիական քիմիկատեխնոլոգիական, ռուս-ղազախական «Горение и плазмохимии» հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ: Երկար տարիներ եղել է ռուսական «Химическая физика», միջազգային «Chemical Physics Reports» հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ: 1997-2008 թթ. եղել է «Հայաստանի քիմիական հանդես»-ի գլխավոր խմբագիրը: Հեղինակ է ավելի քան 300 գիտական աշխատությունների և գյուտերի:

ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանումը, հանրապետության քիմիական ողջ հասարակությունը սրտանց և ջերմորեն շնորհավորում են Ադուֆ Հայրապետի Մանթաշյանին հոբելյանի առթիվ՝ մաղթելով նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանումը

Գրքերի ճակատագիրը գրքի տարում..



Վերջերս Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի մոտակայքում տեղադրված աղբամանների մոտ մի տարեց մարդ, մեծ կապոցով գրքերը դնելով աղբամանների մոտ, շրջվեց, որ հեռանա. մենք հետաքրքրված հարցրինք.

- Այդ ի՞նչ եք անում, ի՞նչ գրքեր են դրանք:

- Վատ գրքեր չեն, բայց ինձ այլևս պետք չեն,- անտարբեր պատասխանեց մեր հարցին:

- Բա ափսոս չե՞ն, կտանեիք որևէ բուկինիստական գրախանութ:

- Ես մոտերքում չկա բուկինիստական գրախանութ, գրքերը շատ ծանր են, հազիվ եմ կարողանում այստեղ բերել, հեռու չեմ կարող տանել:

- Հե՛տ գրքերի ցուցակը կարելի էր

տանել գրախանութ:

- Ե՛հ, մի անգամ ձեր ասած ցուցակն էլ եմ տարել, ցուցակիս մեջ նշեցին որոշ գրքեր, որ մի քանի շաբաթ անց տանեմ. ներկայումս խանութում տեղ չկա: Չտարա:

- Նշված գրքերը տարե՞լ եք:

- Մի գրավաճառ եկավ մեր տուն, նայեց գրքերիս ցուցակը, ընտրեց մի քանի գիրք և ասաց, որ իրենք գրքերը վերցնում են հատը 100 կամ 200 դրամով:

Գիր ու գրականությունից անտեղյակ մարդ էր. գրապահարաններիս հատորյակները նայելիս էլ ասաց. «...դրանք պետք չեն»: Ես ասացի, որ արկղերում հազարից ավելի գիրք ունեմ: «Հիմա չեմ կարող նայել, ժամանակ չունեմ»,- ասաց:

- Բա ի՞նչ պետք է անես այդքան գրքերը:

- Չգիտեմ,- ուները թոթվեց մեր զրուցակիցը:

Անկեղծ ասած վերոնշյալ պատմությամբ մենք ուզում ենք բարձրացնել բուկինիստական գրախանութների անհրաժեշտության խնդիրը:

Բուկինիստական գրախանութների անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն վերը բերված նման փաստերի առատությամբ:

Հե՛տ գրքի տարում Երևան ժամանող հյուրերը ոչ միայն հետաքրքրությամբ

կայցելեին մեր հարուստ ցուցահանդեսները, այլ նաև կուզեմային նորագույն գրքերից բացի տեսնել նաև առաջներում հրատարակված գրքեր:

Վերջիններս այսօր վաճառվում են ստորգետնյա անցումներում կամ փողոցների մայրերին: Մի՞թե սա պատշաճ է գրքի համաշխարհային մայրաքաղաքին: Իհարկե, ո՛չ:

Գրքի մայրաքաղաքը պետք է ունենա ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով հագեցած բուկինիստական նոր գրախանութներ: Սա ոչ թե սոսկ ցանկություն է, այլ անհրաժեշտություն:

Իրերի բերումով տողերիս հեղինակը մշտապես շփվում է Արաբկիր վարչական շրջանի պատերազմի և աշխատանքի բազմաթիվ վետերանների հետ: Նրանք իրենց կյանքի մայրամուտն ապրող տարեց մարդիկ են և, գրեթե առանց բացառության, մեծ քանակով գրքեր ունեն: Շատերն ասում են, որ իրենք պատրաստ են թեկուզ չնչին գներով հանձնելու իրենց գրքերը գրադարաններին կամ բուկինիստական գրախանութներին, բայց անձամբ իրենք անկարող են: Չգիտեմ ինչպե՞ս և որտե՞ղ: Դա լուրջ խնդիր է նրանց համար, և նրանք օգնության կարիք ունեն:

Պետք է գրքատերերի հասցեով գնալ տները, տեղում, փոխադարձ համաձայ-

նեցված պայմաններով, գրքերը ընդունել և տանել, հանձնել բուկինիստական գրախանութներին:

Դա կնպաստի նորակառույց գրախանութները գրքերով մատակարարելուն, և այդ գրքերը կհայտնվեն բուկինիստական գրախանութներում և ոչ թե աղբամաններում կամ վերավաճառողների մոտ:


Հավանաբար հին սերնդի մարդիկ հիշում են, որ տարիներ առաջ «Գրքերի աշխարհ» խորագրով լրագիր էր հրատարակվում, որը տեղեկացնում էր նոր լույս ընծայվող գրականության մասին: Հիմա չկա նման լրագիր:

Առաջարկում ենք այդ բացը լրացնել... Այն անհրաժեշտ է ոչ միայն «Գրքի տարում», այլ նաև հետագայում:

Բազմաթիվ գրքասերներ, ովքեր ստիպված են իրենց գրքերը հանել վաճառքի, համբերատար սպասում են նոր բուկինիստական գրախանութների բացմանը:

Վերջերս պատկառելի մի վետերան տխուր բողոքեց. «Ո՛վ կմտածեր, որ գրքերս նման ճակատագիր կունենան»: Մնում է հուսալ, որ այս հարցերը մտահոգեն նաև մեր մեծահարուստներին, և նրանք կաջակցեն մեր հողվածում առաջ քաշված խնդիրների իրագործմանը:

**Կառլեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կիբեռնետիկ, մանկավարժ**



Ողջ կյանքը նվիրեց գիտությանը

Գրիգոր Արամ ԳՈՐԶԱՅԱՆԻ 90-ԱՄՆԱԿԻ ԱՄՐԵՒՎ

1922թ. հոկտեմբերի 15-ին Բաղդադում ծնվեց ապագա ճանաչված գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գրիգոր Արամի Գորգադյանը: Այսօր դժվար է կանխագուշակել, թե ինչպիսի ընթացք կունենային նրա կյանքն ու գործունեությունը, եթե Գորգադյանների ընտանիքը երկու տարի անց չտեղափոխվեր Հայաստան: Ակադեմիկոս Գորգադյանը հայկական աստղագիտության առավել ակնառու դեմքերից է: Առաջին մասնագիտական կրթությունը, որ նա ստացավ Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտում (1944), ճարտարագիտական էր, աստղագիտությունից բավականին հեռու: Ինստիտուտում ավարտելն ու մասնագիտություն ձեռք բերելը համընկան այն ժամանակ-

«Աստղագիտություն» հատուկ նախագծային գրասենյակի ղեկավարն էր: 1978-1992 թթ. եղել է ԲԱ արտամթնոլորտային աստղագիտության լաբորատորիայի վարիչ, 1992-2004-ին՝ Գառնու տիեզերական աստղագիտության ինստիտուտի տնօրենը: 1979-ից եղել է նաև ԵՊՀ տիեզերական սարքաշինության ամբիոնի վարիչը: Տասնամյակներ շարունակ դասավանդել է մի շարք դասընթացներ (տեսական աստղաֆիզիկա, երկնային մեխանիկա, արտամթնոլորտային աստղագիտություն ԵՊՀ-ում և ՃՀԳԻՄ մեխանիկա ԵՊՀ-ում), 1962-ին արժանացել է պրոֆեսորի կոչման, 1965-ին ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986-ին՝ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ:

Գորգադյանի աշխատանքները վերաբերում են միջաստղային տարածության ճառագայթային հավասարակշռության խնդիրներին, աստղասփյուռների ձևաբանական և կինեմատիկական ուսումնասիրությանը, դիֆուզ և մոլորակաձև միգամածություններին, տիեզերական սարքաշինությանը:

1960-ականների սկզբից, երբ նոր միայն սկսում էր ձևավորվել արտամթնոլորտային աստղագիտությունը, նա որոշեց իր գործունեության մեջ կիրառել նաև իր ճարտարագիտական գիտելիքները: Այդ աշխատանքների շնորհիվ Գորգադյանը դարձավ տիեզերական աստղագիտության հիմնադիրներից մեկը: Նրա անվան հետ է կապված «Օրիոն 1» և «Օրիոն 2» արտամթնոլորտային աստղագիտարանների օպտիկական համակարգի աշխատանքի սկզբունքի, ավտոմատ կառավարման մեթոդիկայի ու աստղագիտական ստեղծումը: Դրանցից առաջինն աշխատում էր «Սալյուտ» ուղեծրային կայանի վրա և հնարավորություն տվեց ստանալ պայծառ աստղերի սպեկտրները ուլտրամանուշակագույն տիրույթում: Երկրորդ տիեզերական դիտակը, որն ավելի մեծ հնարավորություններ ուներ, 1973-ի ղեկնմաներին տեղակայվել էր «Սոյուզ 13» տիեզերանավի վրա: Այդ վերջին դիտումների շնորհիվ, որոնց միջոցով ստացվել էին մինչև 13-րդ աստղային մեծության հազարավոր աստղերի, ինչպես նաև մոլորակաձև միգամածությունների սպեկտրներ, հնարավոր եղավ քանակական տվյալներ ստանալ ջրածնի ռեզոնանսային Լայման-ալֆա գծում երկֆոտոն ճառագայթման վերաբերյալ, ինչը հաստատում էր մոլորակաձև միգամածությունների անընդհատ սպեկտրի առաջացման այդ կարևոր մեխանիզմի առկայությունը:

Գորգադյանը հեղինակ է մոլորակաձև միգամածություններին, միջաստղային նյութին և բռնկվող աստղերին նվիրված կարևորագույն տեսական և դի-

տողական աշխատանքների: Ընդհանուր առմամբ նա տպագրել է ավելի քան 200 գիտական հոդված և մի շարք մենագրություններ, որոնց թվում՝ «Մոլորակաձև միգամածությունների դինամիկան», «Մոլորակաձև միգամածություններ», «Բռնկվող աստղեր» և այլն: Որպես տեղեկատու աղբյուրներ դրանք մասնագետներին ծառայել են ոչ միայն նախկին խորհրդային Միության ռուսալեզու տարածքում, այլ նաև արտասահմանի այլ երկրներում, քանի որ դրանց մեծ մասը թարգմանվել և հրատարակվել է նաև անգլերեն:

Գրիգոր Գորգադյանը Միջազգային աստղագիտական միության (ՄԱՍ) անդամ է (1950) և ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1975): Պարգևատրվել է խորհրդային «Պատվո նշան» (1972), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով (2011):

Հայ հասարակությանը Գրիգոր Գորգադյանը հայտնի է ոչ միայն որպես բեղուն գիտնական ու տիեզերական աստղագիտարանների կոնստրուկտոր, այլ նաև որպես գիտությանը նվիրված համրամատչելի հոդվածների ու էսսեների հեղինակ: Նրա «Տիեզերքն ափի մեջ», «Մի կու՛մ ջուր» էսսեների ժողովածուները վաղուց արդեն դարձել են գիտության և գիտական զաղափարների ու հայտնագործությունների պատմությամբ հետաքրքրվող ընթերցողի սիրելի գրքերից մեկը: Ողջ կյանքը նվիրելով գիտությանը՝ Գորգադյանը զբաղվել է նաև գեղանկարչությամբ՝ փորձելով գեղանկարչության աշխարհի տեղափոխել նաև տիեզերական զարմանահրաշ գույների ու պատկերների բազմազանությունը:

Սրտանց շնորհավորում ենք ակադեմիկոս Գրիգոր Արամի Գորգադյանին ծննդյան 90-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով նրան երկար տարիների կյանք:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Հողմաէներգետիկայի արդի վիճակը և զարգացման հեռանկարները

Մարդու կողմից քամու էներգիայի օգտագործումը սկսվում է դեռևս մեր թվարկությունից առաջ: Մինչև 19-րդ դարը հողմաղացները ջրաղացների հետ միասին միակ շարժիչներն էին, որոնք օգտագործում էր մարդը:

Մի շարք երկրներում հողմաէներգետիկայի ոլորտում գիտահետազոտական աշխատանքները զարգացան 20-րդ դարի 40-ական թվականների վերջից մինչև 60-ական թվականները: Այդ ժամանակաշրջանում օրգանական վառելիքի գներն ընկան, և հողմակայանները չէին կարող մրցակցել ջերմային կայանների հետ:

Այժմ աշխարհում շահագործվում են մոտ 60 հազար հողմաէներգետիկական կայաններ՝ 32000 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:

Հայաստանում հողմաէներգետիկական պոտենցիալի ճշգրտման նպատակով 1999 թ. Հովանդիայի կառավարությունը հատկացրել է դրամաշնորհ՝ քանի էներգիայի մոնիթորինգ իրականացնելու համար: Տեղադրվել է հինգ կայան Պուշկինի, Սելիմի, Քարախաչի լեռնանցքներում, Արդանիշ ավանում (Սևանա լիճ) և Արփի լճի վրա: Ծրագիրն իրականացվել է 1999-2002 թթ.: Աշխատանքների կատարման արդյունքում կուտակվել են հողմաէներգետիկական ներուժի վերաբերյալ մեծածավալ տվյալներ, պատրաստվել է գործարար առաջարկություն՝ 20 ՄՎտ հզորությամբ հողմաէներգետիկայան կառուցելու համար:

2005 թ. դեկտեմբերի 6-ին Պուշկինի լեռնանցքում շահագործման հանձնվեց Հայաստանում և տարածաշրջանում առաջին 2.6 ՄՎտ հզորությամբ հողմաէներգետիկայանը, որը բաղկացած է 4 հողմակներից: Նախատես-



վում է արտադրել տարեկան 5 միլիոն ԿՎտ.ժ էլեկտրական էներգիա: Կայանի ծառայության ժամկետը հաշվարկված է առնվազն 20 տարի: Հողմաէներգետիկայանը կառուցվել է Իրանի տրամադրած 3.5 միլիոն դոլար դրամաշնորհով: Իրանական կողմի հետ նախատեսվում է ընդարկել կայանի ընդլայնման խնդիրը: Տեղանքը հնարավորություն է տալիս մինչև 90 ՄՎտ հզորություն զարգացնելու: Ներկայումս հողմաէներգետիկայի զարգացման համար ուսումնասիրություններ են կատարվում Սիսիանում և Գյումրիում: Կմշակվի քանի ճշգրիտ քարտեզ, որը հնարավորություն կտա այս ուղղությամբ նոր ներդրումներ անելու:

Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում 1980-ական թվականներին սկսեցին իրականացնել մշակումներ հողմաէներգետիկայանների ստեղծման բնագավառում: Ներկայումս ԱՄՆ-ում շահագործվում է ավելի քան 30 հազար հողմային էլեկտրակայան: Դանիայում նախատեսվում է գոյություն ունեցող հողմային էլեկտրակայանների հզորությունները 1700-ից հասցնել մինչև 2500 ՄՎտ-ի: Յուրաքանչյուր տարի շարք է մտնում

20-ից 50 ՄՎտ հզորություն: Լեհաստանում նախատեսվում է կառուցել հողմաէլեկտրակայաններ մինչև 1000 ՄՎտ գումարային հզորությամբ: Հողմաէներգետիկայի զարգացման մեծ ծրագրեր են իրականացվում Հնդկաստանում և Չինաստանում: Ռուսաստանի ձեռնարկություններում առանձին հողմագրեզատներ ունեն մինչև 1000 ԿՎտ հզորություն: Ներկայումս շահագործվում են մոտ 1500 հողմագրեզատներ 0.1-ից մինչև 16 ԿՎտ հզորությամբ: Օրինակ, 1000 ԿՎտ հզորությամբ մեկ հողմագրեզատ Կալմիկիայում, 1500 ԿՎտ՝ Վորկուտայում՝ 300 ԿՎտ՝ Ռոստովում, 600 ԿՎտ՝ Կալինինգրադի մարզում և երկու 270 ԿՎտ՝ Կամչատկայում:

Հողմաէներգետիկական կայանների նախագծման ժամանակ նպատակ է դրվում նվազեցնել համակարգի արժեքը՝ հաշվի առնելով նրա շահագործման ժամկետը և արտադրված էներգիայի ինքնարժեքը: Դա պահանջում է, որ հողմաէներգետիկական կայանի կառուցման համար տեսակարար կապիտալ ծախսերը լինեն նվազագույնը: Անհրաժեշտ է նաև, որպեսզի հողմաէներգետիկական կայանը նախագծվի՝ հաշվի առնելով նրա շահագործման ընթացքում ծախսերի նվազագույն պահանջը: Հայտնի է, որ հողմաէներգետիկայանները չեն աղտոտում օդային և ջրային միջավայրերը: Նրանց կառուցման համար գոյություն ունի էկոլոգիական բնույթի երկու հիմնական հարց՝ աղմուկի առաջացումը և նրա ազդեցությունը լանդշաֆտի (բնապատկերի) վրա: Աղմուկը հիմնականում առաջանում է հողմանախիվ առանցքակալների և գեներատորի միջոցով: Աղմուկի մակարդակը կլինի թույլատրելի սահմաններում, եթե կայանը տեղակայվի բնակելի զանգ-

վածներից բավարար հեռավորության վրա:

Քանի էներգիայի խտությունը մեծ չէ: էներգիայի զգալի քանակություն արտադրելու համար հարկավոր է կառուցել շատ կայաններ: Դա իր հերթին պահանջում է լրացուցիչ հողային տարածքներ: Հողմային կայանները փակում են փչող քամիների ճանապարհը, խախտվում է բնության բնական ընթացքը և կարող է բերել տեղական կլիմայի անցանկալի փոփոխության: Հողմաշարժիչների թիակները վտանգ են ներկայացնում չվող թռչունների համար: Ժամանակակից հողմային կայաններում թիակները պտտվում են բավականին արագ և համարյա աննկատ են չվող թռչունների համար: Հողմային կայանները կարող են բացասաբար ազդել նաև ռադիո և հեռուստատեսային հաղորդումների որակի վրա:

Հողմային էլեկտրակայանները չեն կարող արտադրել էներգահամակարգի համար պահանջվող հզորություն, չեն կարող օգտագործվել նաև բեռնվածքի գրաֆիկի բազիսային մասում, քանի որ ունեն հավանական բնույթ: Նրա աշխատանքը բերում է լրացուցիչ ծախսերի ավելացմանը՝ կապված գեներացող ազդեցությունների ռեժիմների ավելի հաճախակի փոփոխության անհրաժեշտության հետ: Հետևաբար, էներգահամակարգում էլեկտրամատակարարման արդյունավետության և հուսալիության բարձրացման համար պետք է օգտագործվեն զազատուրբինային կայաններ, որոնք հնարավորություն կտան լուծելու տարաբնույթ հարցեր:

Ստեփան ՊԱՊԻՅԱՆ
Հայկական էներգետիկական
ակադեմիայի նախագահ,
տեխնիկական
գիտությունների
թեկնածու

➤ 6 որոշ ժամանակ անց Հայաստանի Հանրապետության կարիքների համար արտադրվեն ինքնաթիռներ ու ուղղաթիռներ, գյուղատնտեսական տրակտորների արտադրությունը կազմակերպվի մոտակա և հեռավոր հարևանների պահանջները բավարարելու, հետագայում այլ տրակտորներ և «տրակտորանման» այլ մեքենաներ (տանկեր) ու մի շարք այլ զինատեսակներ ու զինամթերք արտադրելու նպատակով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ թեկուզև միայն ինքնաթիռի մասերի և գյուղատնտեսական տրակտորների արտադրության համար անհրաժեշտ է լինելու ունենալ մեծաքանակ (տարեկան մի քանի միլիոն տոն-

րության արդյունաբերությունը,
- բազմակի կմեծանա պետական գանձարան մուտք գործող դրամների ու տարադրամի քանակը,
- զգալիորեն կմաքրվի բնական միջավայրը ծանր մետաղների և թունավոր տարրերի թափոններից,
- զգալիորեն կկրճատվի կամ նույնիսկ կդադարի արտագաղթը,
- զգալիորեն կբարելավվի պետական անվտանգությունը և այլն:
Ի հավելումն գրվածների՝ նշենք հետևյալը.
2012 թ. ապրիլի 20-ին՝ ժամը 18⁰⁰-ին, «Շանթ» հեռուստաալիքով հաղորդում տրվեց այն մասին, որ Ռու-

միլիարդավոր դոլարներ կլցնեն այն ձեռներեցների բանկային հաշիվները, ովքեր մետալուրգիական գործարաններ կկառուցեն պղնձամոլիբդենային, ոսկեբեր, ոսկի-բազմամետաղային և երկաթաքարային հանքավայրերի հումքային հենքի վրա և, ապահովելով ներքին կարիքները, միջազգային շուկա կհանեն ոչ թե հումք կամ կիսաարտադրանքներ (մետաղների խտանյութեր), այլ վերջնարտադրանքներ (մետաղներ ու մետաղարտադրանքներ): Առավել հարուստ կլինեն այն ձեռնարկատերերը, ովքեր մետաղական օգտակար հանածոների հանքավայրերը կշահագործեն համալիր, հանքաքարերից բարձր ու գերբարձր տոկոսներով

Նորից ԸԸ լեռնահանքային արդյունաբերության...

նա) և և գունավոր մետաղներ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ դրանց ներկրումը դոսից՝ հազարավոր կիլոմետրեր հեռվից, շատ ու շատ կթանկացնի մեր արտադրանքների ինքնարժեքը, իսկ այդ պայմաններում մեր արտադրանքները մրցունակ չեն կարող լինել միջազգային շուկայում:

Մենք ունենք բավականին մեծաքանակ հումք և և գունավոր մետաղների մետաղարտադրանքների ստացման համար: Գունավոր մետաղների՝ պղնձի, կապարի, ցինկի, մոլիբդենի և այլնի պաշարներն ու կանխատեսումային ռեսուրսները կազմում են տասնյակ միլիոն տոննաներ, և մետաղներից՝ 2-3 միլիարդ տոննա, որոնք, հետագայում երկրաբանաորոնողական և հետախուզական աշխատանքների արդյունքով, հնարավոր է կրկնապատկել և եռապատկել:

Սև և գունավոր մետաղներ ու մետաղարտադրանքներ ունենալու պարագայում ոչ միայն կապահովենք նոր ստեղծվող ինքնաթիռի մասերի և տրակտորների գործարանների պահանջները, այլև կխթանենք հետխորհրդային տարիներին գործազրկության մատնված հարակից արտադրությունների՝ էլեկտրոնիկայի և միկրոէլեկտրոնիկայի, մալուխների, էլեկտրական մեքենաների, հաստոցների և այլնի վերագործարկմանը:

Ի՞նչ կունենանք մեր առաջարկությունները կիրառելու պարագայում.

- լեռնահանքային ու մետալուրգիական ձեռնարկություններում և հարակից արտադրություններում կստեղծվեն հարյուր հազարավոր նոր աշխատատեղեր,
- բազմակի կմեծանա լեռնահանքային արդյունաբե-



սաստանի Դաշնության միլիոն-միլիարդատերերի առաջին տասնյակը զբաղեցնում են մարդիկ, ովքեր զբաղվում են լեռնահանքային արդյունաբերությամբ: Եվ զարմանալիս այն է, որ նավթի և գազի գերիզոր պաշարների տիրապետող երկրում այդ գերիարուստ մարդկանց առաջին եռյակը զբաղեցնում են ոչ թե նավթ ու գազ արդյունահանող ու արտահանող մարդիկ, այլ մետաղական օգտակար հանածոներ արդյունահանողները և մետալուրգիական ձեռնարկություններ ունեցողները:

Համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական ձեռնարկությունները միլիոն-

կկորզեն բոլոր՝ հիմնական և հարակից, բաղադրիչները և մետալուրգիական փուլով թողարկված մետաղների (և ոչ մետաղների՝ սելենի, տելուրի) մի մասը (գոնե 10-20%), շուկա դուրս կբերեն մաքրված՝ գտված ու գերզտված վիճակով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերջիններս իրենց չգտված տեսակներից թանկ են 6-15 և մինչև 100 անգամ:

Հայաստանի կառավարությունն էլ այս գործում շատ կարևոր դեր ունի կատարելու՝ հանքահագործողներին պարտավորեցնելու ներդրումներ կատարել մետալուրգիական գործարաններ կառուցելու համար, գերշահույթ ապահովելու նպատակով հանքավայրերը համալիր շահագործելու, բնական միջավայրը մաքուր պահելու նպատակով բոլոր՝ հիմնական և հարակից, տարրերը բարձր տոկոսներով կորզելու համար և այլն:

Այդ միլիարդները կարող են մտնել պետական գանձարան, եթե ՀՀ կառավարությունն ինքը ձեռնարկի մետալուրգիական գործարանների կառուցումն ու գործարկումը: Նշենք, որ միայն ՀՀ երկաթահանքերի արդյունավետ շահագործումից ու ստացվող խտանյութերի մետալուրգիական փուլով նույնքան արդյունավետ վերամշակումից սպասվող արդյունքը տարեկան կարող է կազմել 4,16 մլրդ դոլար: Իսկ եթե թողարկվող երկաթ մետաղի 20%-ը միջազգային շուկա դուրս բերվի գտված վիճակով, ապա միայն երկաթից սպասվող տարեկան ընդհանուր հասույթը կարող է կազմել 12,6 մլրդ դոլար:

Հրաչյա ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանահանքաբանական
գիտությունների դոկտոր

Որպես թեմայի շարունակություն

Միլիոն-միլիարդները՝ ումանց, թույնն ու աղբը՝ ժողովրդին

«Աշխարհը դնակ է, մարդը՝ դանակ, կտրեցեք, տարեք, ով որքան կարող է» այս ժողովրդական ասացվածքը տեղին է այժմյան Հայաստանի համար:

Մեր ընդերքի հարստությունները մեր հարազատ կառավարությունը տվել է օտարներին և անհատ ձեռներեցներին, չնայած դրա անհրաժեշտությունը առանձնապես խոշոր հանքավայրերի և խոշոր շահույթ ապահովող ձեռնարկությունների գծով չկար և չպետք է լիներ:

Տնտեսագիտական առումով Հայաստանի նման երկրներում պետք է ապապետականացվեին այն ձեռնարկությունները, որոնք կամ գործում էին վնասով, կամ շատ չնչին շահույթով (դրանք պետք է մասնավորեցվեին, որպեսզի «մասնավորը» իր ներդրումներին և ունակություններին սահմաններում արդյունավետ դարձնել տվյալ ձեռնարկությունը): Բայց եթե ձեռնարկությունն աշխատում է մեծ շահույթով, և ապագան խոստանում է ավելի մեծ շահույթ, ապա այդպիսի ձեռնարկության ապապետականացումը լավագույն դեպքում հիմարություն է:

Խոսքը վերաբերում է ՀՀ լեռնահանքային արդյունաբերության այնպիսի ճյուղերին, որոնք մշտապես աշխատել և աշխատում էին բավականաչափ մեծ շահույթով: Դրանցից կցանկանայի նշել Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը և Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան, որոնք շահագործում են աշ-

խարհի մասշտաբով խոշորագույն Բաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրն ու Հայաստանի ոսկու ամենախոշոր՝ Սոտքի հանքավայրը: Մինչև 2006-2007 թթ. Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում, որին տիրացել էին կանադացիներն ու հնդիկները, հարստացվում և ոսկի էր կորզվում նաև Մեղրաձորի հանքավայրից, որն էլ շահագործվեց բարբարոսաբար, թալանված ու ապականված հանձնվեց ԳեոՊրո Մայնինգ ռուսական ընկերությանը: Վերջինս հրաժարվեց Մեղրաձորի մնացած պաշարների շահագործումից՝ պատճառաբանելով, որ դրա շահագործումը տնտեսապես ձեռնտու չէ:

Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ապապետականացման հարցը պարոն Շշմարիտյանի կողմից բարձրացվեց 2003 թվականին, այն ժամանակ, երբ ձեռնարկությունը, աշխատելով իր կարողությունից ցածր կարողությամբ, ուներ բավականին խոշոր շահույթ՝ 20 մլն դոլար: Այդ ձեռնարկության ապապետականացման հենց առաջին տարում՝ 2005 թ., պղնձի, մոլիբդենի և ոսկու գների անմասնադեպ աճի պայմաններում ձեռնարկության շահույթն էլ աճեց բազմակի:

Եթե համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի անցած տարիներին մետաղների գների նվազման հետ կապված փոքր-ինչ նվազեց Ձանգեզուրի կոմբինատի շահույթը, այժմ արդեն դա թռիչք է ապրում: Որքան մեծանում է

նշված ձեռնարկության շահույթը, այնքան բացվում է դրա տիրոջ ախորժակը: ԽՍՀՄ-ի օրոք Բաջարանի հանքավայրի ընդերքից նախագծված էր արդյունահանել և մշակել 9 մլն տ հանքաքար, որն էլ ապահովում էր լավագույն արդյունք, սակայն այդ քանակը այժմ չի բավարարում Բաջարանի «տիրոջ» անհագ ախորժակը: Որոշվել է հանքաքարերի արդյունահանման քանակը մեծացնել և առաջիկա երկու տարիներին հասցնել 20 մլն տոննային:

Նույնպիսի ագահության մոլուցք է պատել նաև Սոտքի հանքավայրը շահագործողներին, որոնք ծրագրել են այդ հանքավայրի ընդերքից արդյունահանել և մշակել 2 մլն տ հանքաքար (ոսկու կորզումը դրանք մոտ ապագայում կհասցնեն 150 հազ. ունցիայի (մոտ 4800 կգ)):

Ստացվում է այնպես, որ մեր հանքավայրերի հետ ոմանք կարող են վարվել այնպես, ինչպես ցանկանում են. մի տեղ հանքաքարի արդյունահանումն ու մշակումը կմեծացնի 2,2 անգամ, մեկ այլ տեղ՝ 4-5 անգամ, և ոչ մի արգելք ու խոչընդոտ: Ինչո՞ւ է այդպես: Չէ՞ որ այդ հանքավայրերը բնության կողմից մեր ժողովրդին տրված բարիքներ են, որոնց հարստությունները պատկանում են ՀՀ ողջ ժողովրդին և ոչ թե ինչ-որ մեկին: Ինչո՞ւ է թույլատրվում մի քանի տարվա ընթացքում թալանի ու փոշիացման ենթարկել մեր ընդերքի հարստությունը՝ առանց հաշվի առնելու ապագա սե-

րունդներին հասանելիքը:

Այսօր արդեն Ձանգեզուրի կոմբինատի պղնձների թափման տեղեր չեն ծաղկում՝ դրանք անվտանգ ամբարելու համար իսկ վաղը 20 մլն տ-ի պարագայում՝ Կապանի ժողովրդի կյանքը կախված կլինի բարակ թելից:

Նույն վիճակն է տիրում Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի շրջակայքում, թափոններն ահագնացող վտանգի տակ են պահում շրջակայքի բնակիչներին, իսկ մի քանի տարի հետո պղնձաբարի պարունակությունը հսկողության տակ պահելն անհնար կդառնա: Դեռևս մի քանի տարի սրանից առաջ Արարատ քաղաքի հարավարևելյան ծայրամասի բնակչությունը ոտքի էր ելել ոսկու կորզման ֆաբրիկայի պղնձաբարի վերացման պահանջով: Նույնպիսի պահանջով արդեն 6 տարուց ավելի Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղի բնակչությունն է ոտքի ելել: Վերջերս էլ արծվանիկցիներին է միացել Գեղանուշ գյուղի բնակչությունը: Ի՞նչ է լինելու նշված տարածքների բնակչության վիճակը տասը տարի հետո: Ինձ, համենայն դեպս, հայտնի է, թե ինչ է լինելու: Իսկ հայտնի՞ է արդյոք դա ՀՀ կառավարությանը, որի լուռ համաձայնությամբ թալանվում ու փոշիացվում են մեր ընդերքի հարստությունները, միլիոնները դուրս են տարվում կամ մտնում են մի քանիսի գրպանները, իսկ թույնն ու աղբը թափվում մեր ժողովրդի «գլխին»:

Հ. Ս. Ավագյան
Երկրաբանահանքաբանական
գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից

ԱՆՊԻՅՑ ԱՆԵՔՍԱՆՊՐՈՎԻՉ
ԳՈՆՉԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

2012 թ. հոկտեմբերի 10-ին Մոսկվայում կյանքի ութսունմեկերորդ տարում իր մահկանացուն կնքեց ականավոր մաթեմատիկոս և գիտության հմուտ կազմակերպիչ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի պետական մրցանակի, Պ.Ն. Դեմիդովի և Խրյոմֆ մրցանակների դափնեկիր, ՌԳԱ Մ.Վ. Կելդիշի անվան ոսկե մեդալի և պետական մի շարք շքանշանների ասպետ Անդրեյ Ալեքսանդրովիչ Գոնչարը: Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Պուտինը և մատապետ Դ. Մեդվեդևը հղել են ցավակցական հեռագրեր, հուղարկավորությունը կայացավ հոկտեմբերի 12-ին Մոսկվայի Տրոեկուրովյան գերեզմանոցում:

Ա.Ա. Գոնչարի գիտական հետազոտություններն ընդգրկում են մաթեմատիկայի իրական և կոմպլեքս անալիզի դասական բնագավառները, ներառյալ ֆունկցիաների մոտավորության և կոնստրուկտիվ տեսության, օրթոգոնալ բազմանդամների և պոլինոմիալ տեսության ուղղությունները, որտեղ նա ստացել է հիմնարար գիտական արդյունքներ: Մասնավորապես՝ անվերջ կոտորակների, ռացիոնալ և հարմոնիկ ֆունկցիաներով մոտավորությունների միջոցով անալիտիկ, մերոմորֆ և հարմոնիկ ֆունկցիաների հատկությունների ուսումնասիրությանը նվիրված նրա բարձրակարգ հետազոտություններն էական ազդեցություն ունեցան այդ ուղղությունների հետագա զարգացման վրա: Ա.Ա. Գոնչարը ֆունկցիաների մոտավորության տեսության գծով աշխարհում լայնորեն հայտնի գիտական դպրոցի հիմնադիրն է: 1987 թվից նա ռուսական հնագույն «Математический сборник» ամսագրի գլխավոր խմբագիրն էր՝ դժվարին պայմաններում պահպանելով ամսագրի բարձր վարկը:

Ա.Ա. Գոնչարն ուներ գիտության կազմակերպչի բնածին հատկություններ: 1988-1991 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ մաթեմատիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ հետխորհրդային տարիներին իր հարուստ փորձով և գիտելիքներով մեծ աշխատանք է տարել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի գիտական կարողությունների, կադրերի պահպանման և զարգացման գործում: 1991-1998 թթ. աշխատելով որպես ակադեմիայի փոխնախագահ, այնուհետև Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կազմակերպիչ - տնօրեն:

Ա.Ա. Գոնչարն ուներ նաև հայկական արմատներ: Նրա մայրը՝ Ալիսա Խանջյանը, ականավոր հայ պետական գործիչ Աղասի Խանջյանի քույրն էր, իսկ հայրը՝ Ալեքսանդր Գոնչարը, ռուս ճարտարագետ էր, որն ստալինյան բռնապետության անմեղ զոհ դարձավ: 1942-1949 թթ. Ա.Ա. Գոնչարը մոր և քրոջ հետ ապրել է Երևանում, սովորել և ոսկե մեդալով ավարտել Չկալովի անվան դպրոցը: Այնուհետև մեկնել է Մոսկվա, շարունակել ուսումը Լոմոնոսովի անվան պետական համալսարանում՝ աշակերտելով ականավոր մաթեմատիկոս, ակադեմիկոս Ա.Ն. Կոլմոգորովին և թղթակից անդամ Ա.Ն. Մերգելյանին: Այդ ժամանակից էլ սկսվում է նրա փայլուն աշխատանքային գործունեությունը Մոսկվայի պետական համալսարանում և գիտությունների ակադեմիայում:

Ա.Ա. Գոնչարը սերտ կապեր էր պահպանում Հայաստանի իր ընկերների, մտավորականների, գիտնականների, այդ թվում՝ մաթեմատիկոսների հետ: Նա էական ավանդ ունի Հայաստանի համար բարձրորակ մաթեմատիկոսների գիտական կադրեր պատրաստելու, ռուս-հայկական գիտական կապերը և համագործակցությունը զարգացնելու գործում: Նրա հիշատակը վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

Այս տարի հունիսի 21-ին լրացավ Արցախյան ազատամարտի լեգենդ, ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ Լեոնիդ Ազգալյանի զոհվելու 20-ամյա տարեկիցը, իսկ նոյեմբերի 22-ին լրանում է ծննդյան 70-ամյակը:

Լեոնիդ ԱԶԳԱԼՅԱՆ

«Մա
Հայաստանն է՝
և վերջ»

Նրա զինակիցների հավաստմամբ և իրավամբ նա հայկական բանակի հիմնադիրներից է: Ղարաբաղյան շարժման առաջին օրից Լեոնիդ Ազգալյանը որպես բնատուր ռազմական տաղանդավոր գործիչ լծվեց ազգային-ազատագրական պայքարին ստեղծելով «Ազատագրական բանակ» ռազմական կազմավորումը: Նրա հրամանատարությամբ ստեղծված զորամիավորումը մասնակցել է Գետաշենի ենթաշրջանի, Շահումյանի և Մարտակերտի շրջանների պաշտպանական մարտերին: Լեգենդար հրամանատարը առաջիններից մեկն էր, որ նշեց. «Ֆիդայական ջոկատները այս պատերազմում այլևս անելիք չունեն: Պետք է ստեղծել կարգապահ և մարտունակ բանակ»:

Հատկանշական է այն, որ յուրաքանչյուր մարտական գործողության նա պատրաստվում էր ամենայն բժանդրությամբ և պատասխանատվությամբ: Պատահական չէ, որ մարտական գործողություններից միավորումը դուրս էր գալիս նվազագույն կորուստներով:

Ցավոք, 1992 թվականի հունիսի 21-ին նա զոհվեց դավադիր զնդակից Մատաղիս և Տոնաշեն գյուղերի հարակից բարձունքում:

Փառապանծ հրամանատարի հիշատակը հավերժացնելու համար ծնունդով Մատաղիս գյուղից, ՀՀ ԳԱԱ նախագահության սփյուռքի բաժնի պետ, ԵՊՀ պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանյա Բարսեղյանը և ծնունդով Տոնաշեն գյուղից ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, ՀՀ նախագահին կից հանրային խորհրդի մշակույթի ենթահանձնաժողովի անդամ Վլադիմիր Պողոսյանը նախաձեռնեցին և կազմակերպեցին Լեոնիդ Ազգալյանի հուշաքարի տեղադրումը Մատաղիսից Տոնաշեն տանող ճանապարհի՝ Թարթառ գետի կամրջի հանդիպակաց ժայռին:

Հուշաքարի հանդիսավոր բացման արարողությունը մեծ շուքով տեղի ունեցավ հոկտեմբերի 13-ին (ի դեպ «13»-ը նրա զաղտնաբառն էր): Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին ԼՂՀ ՊԲ հրամանատարի



անձնակազմի գծով տեղակալ, գեներալ-մայոր Ա. Մակարյանը, Մարտակերտի վարչակազմի ղեկավար Վ. Խաչատրյանը, շրջանի վարչակազմի ներկայացուցիչներ, բարձրաստիճան սպաներ, զինվորներ, Մատաղիսի և Տոնաշենի համայնքների բնակիչներ, դպրոցականներ, հյուրեր Երևանից և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Հուշաքարի բացման միջոցառման իրենց ջերմ մասնակցությունն ունեցան Լ. Ազգալյանի զինակից ընկերները Արցախի ազատամարտիկների միության Սարտակերտի տարածքա-

խաչատրյանը, պրոֆեսոր Վանյա Բարսեղյանը, Վլադիմիր Բալայանի մայրը՝ Դարիկո մայրիկը, շրջանային հիվանդանոցի վաստակաշատ բժշկուհի տիկին Միլետա Հովհաննիսյանը, վաստակաշատ ուսուցչուհի Նելլի Գասպարյանը և այլք: Ելույթ ունեցողները հիշեցին դրվագներ Լ. Ազգալյանի անցած մարտական հերոսական ուղուց, կարևորեցին հուշաքարի տեղադրման նշանակությունը մատաղ սերնդի ռազմահայրենասիրական ոգու բարձրացման գործում:

Ելույթ ունեցողները և միջո-



յին բաժանմունքի նախագահ Գրիգորի Միրզոյանի զխավորությամբ:

Հուշաքարի բացման պատվին արժանացան «Ազատագրական բանակի» «Արցախյան ճակատի» հրամանատար Վլադիմիր Բալայանի մայրը՝ Դարիկո մայրիկը, և պրոֆեսոր Վ. Բարսեղյանը:

Հուշաքարն օծեց Մարտակերտի Սուրբ Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր-Բարսեղ քահանա Անդրյանը:

Իր ելույթում գեներալ-մայոր Ա. Մակարյանը ընթերցեց ԼՂՀ կառավարության հոկտեմբերի 12-ի որոշումը Լ. Ազգալյանի ծննդյան 70-ամյակին նվիրված միջոցառումների գրաֆիկի հաստատման մասին:

Ելույթ ունեցան Մարտակերտի վարչակազմի ղեկավար Վ.

ցառման բոլոր մասնակիցները իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին հուշաքարի պատրաստման և տեղադրման կազմակերպիչներ պրոֆեսոր Վանյա Բարսեղյանին և Վլադիմիր Պողոսյանին, ովքեր դարաբաղյան շարժման առաջին օրվանից անմիջական մասնակցություն են ունեցել հայրենիքի պաշտպանության համար մղված մարտական գործողություններին:

Հուշաքարից բաժանվելիս Լ. Ազգալյանի հայացքում կարդացի նրա արտահայտած հետևյալ միտքը. «Մի՛ հավատացեք, եթե զան, ձեզ ասեն, որ ես զոհվել եմ: Ես Իսթամբուլի պատերի տակ եմ ընկնելու»:

Վլադիմիր ԴԱՎԹՅԱՆ
«Զրաբերդ» ՀԲ միության
նախագահ, ՀԴՏՀ-ի
դոցենտ

«Գիտություն»

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆԵրևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝
69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 24. 10. 2012 թ.:

Տպաքանակը՝ 500:

"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА